I

Կ. ՊՈԼՍԻ ԵՎ ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ
(1915–1916 թթ.)

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Տեղահանությունները և աքսորը, որպես ցեղասպանության բաղկացուցիչ մասեր, ինչպես հայտնի է, պետք է ընդգրկեին նաև Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ ազգաբնակչությանը: Եվ միայն Առաջին աշխարհամարտի ռազմաքաղաքական իրադարձությունների ընթացքն ու երիտթուրքական կառավարողների կողմից դրանցով պայմանավորված մոտեցումները խոչընդոտեցին, որ նշված հանրությունները զերծ մնան զանգվածային տեղահանումներից ու ոչնչացումից՝ ենթարկվելով դրան ուղղված մասնակի, բնակչության սահմանափակ քանակներ ենթադրող գործողությունների: Այլ կերպ ասած, մասնակի տեղահանումներն ընդհանրական տեղահանումների առաջին փուլն էին, որոնք իրենց հետագա ծավալները չստացան: Մայրաքաղաքի հայության վերացման գործողությունները երիտթուրքերը սկսեցին, ինչպես ամենուրեք, նախօրոք մշակված սխեմայով. տղամարդկանց զորակոչ, ապա մտավորականության աքսոր՝ բանակում և աքսորի ճանապարհներին նրանց ոչնչացնելու պայմանով, այնուհետև բուն բնակչության ներքնախավերից սկսած մյուս բոլորի տեղահանությանն ուղղված միջոցառումներ:

Դարդանելի ձգձգված գործողության ավարտին իրենց հույժ կասկածելի հաջողությունները թևավորեցին երիտթուրքական կառավարողներին՝ բնաջնջման ծրագիրը գործնականի վերածելու ուղղությամբ: 1915 թ. ապրիլի 24-ը, ըստ էության, պոլսահայերի տեղահանության սկիզբն էր, որ նախապես տարածվեց մտավորականության վրա: Այստեղ նշված օրը և դրան հաջորդած շաբաթների ընթացքում պոլսահայ համայնքը փաստորեն զրկվեց իր մտավորականությունից՝ ձերբակալվեցին ու աքսորվեցին հազարավոր մարդիկ: Արևմտյան Հայաստանում զանգվածային տեղահանումներն սկսվելուց առաջ և այդ ընթացքում Կ. Պոլսի պատրիարքարանը մեկուսացվել էր գավառներից: 1914 թ. հոկտեմբերին Օսմանյան Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց հետո և 1915-ի սկզբներին արգելվեցին պատրիարքարանի գրագրությունները վիճակների ու թեմերի հետ, իսկ տեղահանությունների վերաբերյալ պատրիարքարանի ստացած լուրերը հերքվում էին իշխանությունների կողմից: 1915 թ. մայիսի 27-ին երիտթուրքերը հրապարակեցին

Կասկածելի անձանց արտաքսման մասին Ժամանակավոր օրենքը, որով օսմանյան բանակի հրամանատարներին ոչնչով չսահմանափակված լիազորություններ էին տրվում հայ ազգաբնակչությանն իր բնակավայրերից տեղահանելու գործում[1]:

Վերադառնանք Կ. Պոլսի հայությանը: Մի քանի շաբաթվա ընթացքում այստեղ ձերբակալվեցին 2345 գործիչներ, որոնց ոչ մի մեղադրանք չներկայացվեց և որոնց մեծ մասը հետագայում սպանվեց[2]: Գերմանացի մասնագետների հետ համագործակցող Կ. Պոլսի ոստիկանական վարչությունը իր նախապես կազմած ցուցակներն էր ուղարկել թաղային ոստիկանատներ: «Ղրկուած ծրարն էր, որ բացուած էր ու նախապէս ճշդուած այդ ցանկէն քիչերը միայն կրցան ճողոպրիլ: Այդ քիչերէն մէկն ալ ես էի՝ Շաւարշ Միսաքեանին, փրոֆ. Ա. Խաչատուրեանին, Յովհաննէս Չէօկիւրեանին, Գէորգ Մեսրոպին եւ քանի մը ուրիշներու հետ մէկտեղ»[3],– գրում է Հ. Միրունին:

Միաժամանակ, օսմանյան իշխանություններն հարվածն ուղղեցին մայրաքաղաքի հայկական մշակութային հաստատություններին, որն իր ենթատեքստում ուներ առհասարակ Կ. Պոլիսը հայաթափելու պատրաստի ծրագիրը: Թուրքերի վայրագ գործողություններին համակրանքով հետևող Գերմանիայի դեսպան Վանգենհայմը, ըստ էության կրկնում էր երիտթուրքերի պատճառաբանությունները մայրաքաղաքի հայերի վերաբերյալ: 1915 թ. ապրիլի 30-ին ռայխսկանցլեր Բ. Հոլվեգին հղած իր զեկուցագրում նա գրում էր. «Այստեղի հայերի մեջ կան մի շարք քաղաքականապես ոչ լրիվ անվտանգ անձինք: Նրանց, բնականաբար, պետք է փնտրել ակումբներում և խմբագրություններում գործող անդամների մեջ: Չի կարելի չխոստովանել այն անհանգստությունը, որ պատերազմի անհաջող շրջադարձի դեպքում այս տարրերն առիթը կօգտագործեն՝ խռովություն սադրելու: Պահը հարմար էր՝ այս բոլոր կասկածելի անձնավորություններին մայրաքաղաքից հեռացնելու համար»[4]: Մոտ մեկ ամիս անց, մայիսի 24-ին նույն Վանգենհայմը հեռագրում էր իր երկրի արտաքին գործերի գերատեսչությանը, որ Էնվերը մտադր-

---

[1] *Գերմանիան և Հայաստանը 1914–1918. Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու (այսուհետև՝ Գերմանիան և Հայաստանը), հ. 1, հրատ. և ներածութ. դոկտ. Յոհաննես Լեփսիուսի, Երևան, 2006, էջ 29,* В. Н. Дадрян. История армянского геноцида. Ереван, 2007, с. 284.

[2] В. Н. Дадрян. *Նշվ. աշխ., էջ 284:*

[3] *Յ. Միրունի. Ինքնակենսագրական նոթեր, Երևան, 2006, էջ 200:*

[4] *Գերմանիան և Հայաստանը, էջ 162: «Ակումբներում և խմբագրություններում գործող անդամներից», իբր, ակնկալվող վտանգի մասին երիտթուրքական տեսակետը որդեգրած դեսպանի մտքերը վկայում են, որ 1914-ի վերջերին և 1915-ի սկզբներին իշխանությունները վերացրել կամ անգործունակ էին դարձրել Կ. Պոլսի հայերի մշակութային և կրթական հիմնարկները, այլև պարբերական հրատարակությունների մեծ մասը:*

վել է «փակել մեծ թվով հայկական դպրոցներ, արգելել հայերեն փոստային թղթակցությունը, ճնշում գործադրել հայկական թերթերի վրա»[5]:

1915 թ. ապրիլին, երբ արդեն որոշված էր Կ. Պոլսի հայ մտավորականության ճակատագիրը, և որին տեղյակ չէր կարող չլինել գերմանական դեսպանությունը, վերջինս փորձեց հայերից քամել առավելագույնը՝ հօգուտ Գերմանիայի և նրա դաշնակից Օսմանյան Թուրքիայի: Դեսպանատան աշխատակից Մորթմանը դիմում է պատրիարք Զավենին՝ մի կոնդակով հորդորելու կովկասյան ճակատի հայ զինվորներին, որ նրանք չկռվեն թուրքերի դեմ: Պատրիարքը հրաժարվում է, հայտնելով, որ Ռուսաստանի հայերը դուրս են իր հոգևոր իրավասություններից և որ ինքը ընդամենը Էջմիածնի կաթողիկոսի փոխանորդն է Կ. Պոլսում: Նույն առաջարկը, ի դեպ, արվել էր Գր. Զոհրապին՝ նրա ձերբակալությունից քիչ առաջ[6]:

Օսմանյան Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելուց ի վեր և հայ բնակչության հալածանքները սաստկանալուն զուգընթաց, պատրիարքարանն անում էր հնարավորը՝ իրադրությունը ինչ-որ չափով մեղմելու համար: Հաճախակի դարձան, հայության կացության թելադրանքով, Խառն ժողովի նիստերը: Գավառներից բոթաբեր տեղեկագրեր ստացող պատրիարքը և ազգային վարչությունը իրենց ժողովներին խորհրդակցության էին հրավիրում համարում և հեղինակություն վայելող անձանց՝ Գր. Զոհրապին, Ա. Գասպարյանին, Ա. Անտոնյանին, Հ. Պոյաճյանին, Ռ. Զարդարյանին, Մ. Նաթանյանին և այլոց: 1914 թ. հոկտեմբերի 25-ին պատրիարքն այցելեց ներքին և արդարության գործերի նախարարներին՝ հայտնելով «հայ ազգին անձնուիրութիւնը հանդէպ օսմանեան հայրենիքին»[7]:

Պատրիարքարանի այս և հետագա բոլոր փորձերը՝ ողոքելու անհանդուրժող և միաժամանակ չքմեղացող իշխանություններին, ոչ մի ազդեցություն չունեցան: Պատասխանը եղան նոր զորակոչը, 1915 թ. սկզբներից՝ հայ զինվորների զինաթափումը և աշխատանքային գումարտակներում առանձնացնելը՝ նրանց ոչնչացնելու նպատակով: Մտավորականությանը ձերբակալելուց հետո Կ. Պոլսում ձեռնարկվեցին քաղաքը հայերից ամբողջովին դատարկելու գործողությունները: Ապրիլի 29-ին հայ բնակչությանը պարտադրեցին հանձնել զենքերը[8], ավելի շուտ նրանց դեմ ուղղված քարոզչական աղմուկը հիմնավորելու համար: Իշխանությունները քաղաքում հաջորդ հարվածն ուղղեցին պանդուխտ և արվարձաններում ապրող հայերի դեմ: Տարերային աքսորներից հետո այս մեկն արդեն կրում էր վարչականորեն կազմակերպված ձեռնարկի հատկանիշները, որ պատրիարքը թվագրում է

---

[5] *Նույն տեղում, էջ 30:*

[6] *Զ ա վ է ն պ ա տ ր ի ա ր ք. Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ և վկայութիւններ, Թեհրան, 2014, էջ 116:*

[7] *Նույն տեղում:*

[8] *Գերմանիան և Հայաստանը, էջ 28:*

1915 թ. օգոստոսով. «Պոլսոյ գաւառացի ամուրիներուն տարագրումն ալ սկսած է երկու շաբաթէ ի վեր. ցարդ 4–5 հազար մարդ տարագրուեցան յանկարծական կերպով, իրենց գործերը երեսի վրայ ձգելով: Ասոնց մէջ ընտանիքի տէր ալ կայ: Այաշ եւ Չանղրրի աքսորուածներուն ընտանիքներուն ալ ազդարարուեցաւ Պոլիսէն մեկնիլ, բայց յետոյ առաջքը առինք: Ասիկա սկզբնաւորութիւնն է Պոլսոյ հայութեան տարագրութեան…»[9]*:*

Գավառացի հայերի արտաքսումները շարունակվեցին նաև հետագա ամիսներին: Ականատես պրոֆ. Հակոբյանը 1915 թ. հոկտեմբերի 15-ին գրում էր. «Պոլիս մարդ չկայ. փողոցները հայ չեք տեսնէր: Սղութիւն և չգոյութիւն ահաւոր են: Գաւառացիներուն մեծ մասը Պոլսէն վտարուեցաւ»[10]*:*

Պանդուխտ հայերի հետ հաշիվները դեռևս լիովին չմաքրած՝ երիտթուրքական իշխանությունները ձեռնարկեցին բուն պոլսահայերի տարագրության գործը: Հայկական կոմիտեի նախագահ Յո. Լեփսիուսը 1915 թ. նոյեմբերի 29-ին գրում էր ռայխսկանցլեր Բ. Հոլվեգին, որ Սոֆիայի Հայկական կոմիտեն իրեն հաղորդագրություն է ուղարկել, ըստ որի, «Հակառակ թուրքական կառավարության Կ. Պոլսի բարձրագույն իշխանությունների ներկայացուցիչների նախկին խոստումներին՝ սկսվել է նաև Կ. Պոլսի հայերի արտաքսումը: Մինչև հիմա արդեն արտաքսվել են 10.000 հոգի, որոնք մեծ մասամբ մորթվել են Իզմիթի լեռներում: Մնացած 70.000-ի արտաքսման ցուցակը պատրաստ է»[11]*: Կարելի է մակաբերել, որ խոսքն այստեղ հիմնականում վերաբերում է պանդուխտներին, որոնց արտաքսումները, ինչպես տեսանք, սկսվել էին դեռևս օգոստոսին և մասամբ՝ պոլսահայերին, որոնց ամբողջական տեղահանությանն էին պատրաստվում իշխանությունները: Ավելացնենք, որ դեկտեմբերի 4-ին նույն տեղեկատվությունը Բեռլինից Կ. Պոլսում գերմանական դեսպանությանն է հղել արտաքին գործերի փոխնախարար Ա. Ցիմմերմանը՝ խնդրելով վճռականորեն բողոքել, եթե իր ստացած հաղորդումը ճիշտ է*[12]*: Դրանից երեք օր անց՝ դեկտեմբերի 7-ին, դեսպան Մետերնիխը հայտնում է ռայխսկանցլեր Բ. Հոլվեգին, որ ոստիկանապետի տեղեկության վրա հենվող մի արժանահավատ կողմի համաձայն, «Վերջերս Կ. Պոլսից ևս Անատոլիա է քշվել մոտավորապես*

---

[9] *Զաւէն արքեպ. Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ և վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 148:*

[10] *Վ. Մալէզեան. Ճամբուս ծայրը, հ. Բ, Փարիզ, 1955, էջ 92:*

[11] *Գերմանիան և Հայաստանը, էջ 353:*

[12] *Նույն տեղում, էջ 354–355: Տե՛ս նաև Յո. Լեփսիուսի «Գաղտնի տեղեկագիրը. հայ ժողովրդի ջարդերը» (Երևան, 2003, էջ 134), որտեղ նշվում է, որ ընդամենը տարագրվեց 10. 000 հայ և ոչ մի տեղեկություն չկա նրանց նոր բնակավայրի մասին: Ուշագրավ է Ռ. Գևորգյանի տվյալը՝ Կ. Պոլսից և Չանաքկալեից (Գելիբոլու, Դարդանելի շրջան) աքսորված հայերի թիվը նա հաշվում է 40 հազար մարդ (*R. G e v o r k i a n. Soykırımın Ikinci Safhasi, Istanbul, 2011, s. 32*):*

4000 հայ, և որ Կ. Պոլիսը աստիճանաբար մաքրվելու է դեռևս այնտեղ ապրող 80.000 հայերից, այն բանից հետո, երբ ամռանը Կ. Պոլսից տարագրվել է մոտավորապես 30.000 հայ և 30.000-ն էլ փախել է»[13]:

Երկու հաղորդագրություններում էլ՝ և՛ Լեփսիուսի, և՛ Մետերնիխի, Կ. Պոլսի հայ բնակչության թվաքանակը մեծապես նվազեցված է: Ակնհայտ է, որ դրանցում շրջանառվող թիվը՝ 80.000-ը, իր հիմքում ունի երիտթուրքերի պաշտոնական վիճակագրական տվյալը. Համաձայնության պետությունների կողմից հայերին բնաջնջելու հայտնի հայտարարությունը հերքելու իր փորձերում թուրքական Հավաս գործակալությունը պոլսահայության թիվը իջեցնում էր 77.835-ի[14]: Այսուհանդերձ, մի կողմ թողնելով Կ. Պոլսի հայերի թվաքանակի խնդիրը, որ կարոտ է ճշտումների, նկատենք, որ Մետերնիխի դիտողությունը ճիշտ էր այն իմաստով, որ երիտթուրքերը շարունակելու են մայրաքաղաքից հայերի արտաքսման գործը:

Կ. Պոլսից տեղահանումները շարունակվեցին նաև 1916 թ. առաջին կեսին: Մայիսի 12-ին պատրիարք Զավենը գրում էր գերմանական դեսպանին, որ «Կ. Պոլսից և Զմյուռնիայից ամեն շաբաթ այլևայլ առիթներով աքսորվում են հարյուրավոր տղամարդիկ», և որ նրանց ունեցվածքը բռնագրավվում է և վաճառվում[15]:

Սա մեր ունեցած վերջին տեղեկությունն է Կ. Պոլսում և Զմյուռնիայում իրականացված տեղահանումների վերաբերյալ: Թեև, ասենք, որ նույն Զավեն պատրիարքը իր հուշերում գրում է, թե երիտթուրքական կառավարությունը 1915 թ. դեկտեմբերին հայերի հալածանքները դադարեցնելու առթիվ գերմանական ու բուլղարական դեսպանների համառ դիմումներից հետո որոշել է հանգիստ թողնել մայրաքաղաքի ժողովրդին և չտեղահանված բնակավայրերի (Զմյուռնիա, Քյոթահիա և այլն) հայերին, և որ «դէպքերը եկան հաստատելու այս բանը»[16]:

Ճիշտ չէր լինի, սակայն, պատրիարքին մտքերի հակասականություն վերագրել: Իր հուշերում երիտթուրքերի՝ հայերի տեղահանումները դադարեցնելու մասին նա արտահայտվում է որոշակի վերապահումով («ըսուեցաւ թէ որոշուած է»), ոչ այնպես հաստատ, ինչը տեսնում ենք գերմանական դեսպանին նրա հղած՝ վերոհիշյալ գրության մեջ: Անտարակույս, պետք է արձանագրել, որ 1916 թ. մայիսին կամ դրանից ոչ շատ առաջ, Կ. Պոլսում և Զմյուռնիայում շարունակվել են հայերի տե-

---

[13] *Գերմանիան և Հայաստանը, էջ 355–356:*

[14] *Զ ա ւ է ն ա ր ք. նշվ. աշխ., Գահիրէ, 1947, էջ 108:*

[15] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). Материалы Политархива МИД Кайзеровской Германии. Сост., автор предисл., введ. и примеч. В. А. Микаелян. Ереван, 1995, с. 327.

[16] *Զ ա ւ է ն պ ա տ ր ի ա ր ք. Պատրիարքական յուշերս, Թեհրան, 2014, էջ 208, 211: Օտար հեղինակներից Ռ. Նոգալեսը իր հերթին նշում է, որ տեղահանումները դադարեցվեցին Գերմանիայի և Ավստրիայի միջամտության շնորհիվ (*R. N o g a l e s. Four Years Beneath the Crescent. New York-London, 1926, p. 135*):*

դահանումները՝ դարձյալ մասնակի ու ոչ ընդհանրական ծավալներով: Այս ամենը կարծեք, հանրագումարի է բերում Յո. Լեփսիուսը, ով նշում է, որ Կ. Պոլսում դեսպանների դիմումներից հետո թուրքական կառավարողները «հրաժարուեցին ընդհանուր տարագրութեան միջոցները տարածել նաև Պոլիսի եւ Իզմիրի հայ ազգաբնակչութիւնների վրայ: Սակայն լռելեայն շարունակեցին Կ. Պոլիսի հայերի տարագրութիւնը: Ընդամենը տարագրուեց 10 հազար հոգի եւ ոչ մի տեղեկութիւն չկայ նրանց նոր բնակավայրերի մասին»[17]:

Առանց այլ, արխիվային կամ վավերագրական տվյալների, կարծում ենք, դժվար կլիներ վերականգնել Կ. Պոլսից տեղահանված հայերի գոնե մոտավորապես թիվը: Յո. Լեփսիուսը, ինչպես տեսանք, 10. 000 տեղահանվածներ է հաշվում 1915 թ. նոյեմբերի վերջերին, նույնքան, որքան Սոֆիայի Հայկական կոմիտեն և Գերմանիայի արտաքին գործերի գերատեսչությունից՝ Ցիմմերմանը: Բայց դեսպան Մետերնիխը, իր հերթին, ինչպես տեսանք, «արժանահավատ կողմից» տեղեկացել էր, որ 1915 թ. ամռանն արդեն Կ. Պոլսից տարագրվել էր մոտավորապես 30.000 հայ, որոնց նա միացնում է «վերջերս (գրում է 1915 թ. դեկտեմբերի 5-ին – Ա. Խ.*) Կ. Պոլսից Անատոլիա քշված մոտավորապես 4000 հայի»[18]: Եթե սրանց ավելացնենք պատրիարք Զավենի՝ գերմանական դեսպանին 1916 թ. մայիսի 12-ին հղած տեղեկագիրը՝ ամեն շաբաթ Կ. Պոլսից և Զմյուռնիայից հարյուրավոր տղամարդկանց աքսորելու մասին, ապա պարզ կդառնա, որ Կ. Պոլսից աքսորվածների թիվը հաստատապես շատ ավելին է, քան 10.000-ը:*

Կոստանդնուպոլսից աքսորյալների հետ, ինչպես և ամենուրեք, թուրքերը վարվեցին սովորական դարձած կարգով. տեղահանված խմբերը կա՛մ լրիվ, կա՛մ էլ գրեթե լրիվ ոչնչացվում էին ճանապարհներին, այնպես որ նրանցից քչերն էին աքսորատեղի հասնում[19]: Երիտթուրքական կուսակցության շրջանային գործիչների դատավարության նիստերից մեկում դեղագործ Գրիգորը վկայում էր, որ Ստամբուլից Չանքըր տարագրված 180 հայերից միայն 30-ն են ողջ մնացել[20]:

Անցնենք Կ. Պոլսի հայ ազգաբնակչության թվաքանակին, որ աղերսվում է երիտթուրքական կառավարության ցեղասպան ծրագրին: Այդ թվաքանակն ըստ հնարավորին նվազ ցույց տալու և հետագայում պատասխանատվությունից խուսափելու նպատակն էր հետապնդում այն, որ թուրքական Հավաս գործակալութ-

---

[17] *Յ ո. Լ ե փ ս ի ո ւ ս. նշվ. աշխ., էջ 134:*

[18] *Գերմանիան և Հայաստանը, էջ 353:*

[19] *Նայիմ բեյի հուշագրության մեջ Եփրատի ափերն աքսորված հայերի խմբերում կային Ստամբուլի շրջակայքի բնակիչներ (տե՛ս Ավ. Փ ա փ ա զ յ ա ն. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Լոս Անճելես, 2005, էջ 17):*

[20] *Մ. Ա ն ո ւ մ յ ա ն. Երիտթուրքերի 1919–1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Երևան, 2011, էջ 100:*

յունը ավելի, քան 200.000-անոց պոլսահայերի թիվը իջեցնում էր մինչև 77.835 մարդու, որոնցից, իբր, ձերբակալվել են ընդամենը 230 հոգի՝ իբրև հեղափոխական շարժման մասնակիցներ[21]: Բոլոր դեպքերում, Կ. Պոլսի հայ ազգաբնակչությունը, անկախ իր թվաքանակի վերաբերյալ տարակարծություններից, ենթարկվեց ոչ թե ընդհանրական, այլ մասնակի տեղահանումների: Ինչն էր զսպում, կամ ավելի շուտ, ստիպում երիտթուրքերին՝ հետաձգել այլևս գործի դրված ոչնչացման ծրագրի վերջնական արարը: Զավեն պատրիարքը կարծում էր, որ Եվրոպայի և առհասարակ Համաձայնության երկրների մամուլում երիտթուրքական դահիճների գործողությունների դատապարտումը վերջիններիս մղեց 1916 թ. սկզբներից անցել որոշ զիջողությունների, այսինքն.

«Ա. մայրաքաղաքին ժողովուրդը իր տեղը հանգիստ թողուլ:

Բ. Չտեղահանուած վայրերու (ինչպէս Իզմիրի, Քէօթահիայի եւ այլն) հայերը այլևս իրենց տեղերը ձգել:

Դէպքերը եկան հաստատելու այս բանը, որ հակառակ շատ մասնակի յաջողութիւն ըլլալուն՝ դարձեալ բան մը չէր»[22]:

Այնուհետև պատրիարքը ևս մեկ հավելում է անում. կառավարությունն այդ որոշումն ընդունել է իր դաշնակիցների ճնշման տակ[23]:

Ա. Բարբին կարծում է, որ Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայերը կարծես թե խուսափեցին այդ կոտորածից և մասնավորապես պոլսահայերը՝ իրենց բազմամարդության և այդ քաղաքում չեզոք երկրների ներկայացուցչության շնորհիվ[24]:

Զավեն պատրիարքը, Յո. Լեփսիուսը և Ա. Բարբին երիտթուրքերի՝ կոտորածներից ձեռնթափ լինելու պատճառը, ինչպես տեսանք, համարում են եվրոպական երկրների միջամտության կամ ճնշումների գործոնը: Այս ամենը, անշուշտ, կար,

---

[21] *Զաւեն պատրիարք. նշվ. աշխ., Թեհրան, 2014, էջ 141–142: Այս կամ այն չափով երիտթուրքական այս կեղծված վիճակագրությունն էին աչքի առաջ ունենում թուրք պաշտոնյաները, երբ Կ. Պոլսի հայերի թիվը հաշվում էին 75–80 հազարի սահմաններում (տե՛ս Գերմանիան և Հայաստանը, էջ 361, 355–356): Հակադրվելով պաշտոնական թվին՝ գերմանական դիվանագետ Մորթմանը հայտնում էր, որ այդ թիվը (75.000-ը) շատ ավելի պակաս է իրականից, այլև հաշվում էր 120–130 հազար հոգի (նույն տեղում, էջ 361): Ա. Բարբին (Բարբյուս) նշում է՝ 150 հազար մարդ (տե՛ս* А. Барби. В стране ужаса. Мученица Армения. М., 2008, с. 56*), իսկ գերմանացի կրոնական և գիտական գործիչները, այդ թվում և Լեփսիուսը, նշում են, որ այդ թիվը հասնում է 180.000-ի (Գերմանիան և Հայաստանը, էջ 332): Կարելի է կարծել, որ նրանք նկատի են ունեցել Կ. Պոլսի հայերի թիվը՝ 1915 թ. ապրիլին և հոկտեմբերին իրականացված աքսորներից հետո, որովհետև նրանց դիմումը գրվել է 1915 թ. հոկտեմբերի 15-ին (Գերմանիան և Հայաստանը, էջ 330):*

[22] *Զաւէն պատրիարք. նշվ. աշխ., Թեհրան, 2014, էջ 211:*

[23] *Նույն տեղում, էջ 213:*

[24] А. Барби. *Նշվ. աշխ., էջ 56:*

բայց մեկ վերապահում կարելի է անել՝ ընդամենը զսպող և հետաձգելու մղող նշանակությամբ: Հակառակ կայզերական գործերի հավատարմատար ֆոն Նոյրաթին, դեսպան Մետերնիխին և այլոց Էնվերի, Խալիլի ու Ջեմալի տված խոստումներին (1915 թ. նոյեմբերին և դեկտեմբերին)[25], Կ. Պոլսի հայերի ձերբակալություններն ու աքսորը շարունակվում էին, ինչպես տեսանք, նաև 1916 թ. մայիսին: Այս առթիվ պետք է ասել, որ խնդիրը իրատեսական և համոզիչ բացատրություն է գտել Ջ. Կիրակոսյանի դիտարկումներում: Նկատի ունենալով 1915 թ. ապրիլ-մայիսի իրադրությունը՝ նա գրում է. «Անշուշտ, կտեղահանվեր Կ. Պոլսի ամբողջ հայ բնակչությունը, եթե երիտթուրք կառավարողները դրա համար ունենային տեխնիկական հնարավորություններ: Կայսրության մայրաքաղաքը ծանր կացության մեջ էր, Անտանտայի զինված ուժերը լրջորեն սպառնում էին նրան»[26]: Ջ. Կիրակոսյանը հարում է, որ իթթիհադի կենտրոնում բուռն վիճաբանություններից հետո որոշվեց առայժմ աքսորել հայ անվանի մարդկանց, իսկ մնացածներին աքսորել ավելի պատեհ ժամանակ:

Հիրավի, այս հանգամանքներն էլ՝ և՛ երիտթուրքերի ներքին տարաձայնությունները, և՛ արտաքին ճնշումները, դարձան ընդհանուր տեղահանության հետաձգման երկու կարևոր պատճառները: Ընդամենը հետաձգման և ոչ թե մայրաքաղաքի հայությանը ամբողջովին տեղահանելու մտադրությունից հրաժարվելուն, յուրատեսակ մի համառության, որ դրսևորվեց մասնակի տեղահանումների գործելակերպով:

Մասնակի տարագրության սարսափներն ապրեց նույն՝ 1915–1916 թթ. նաև զմյուռնահայ համայնքը, սակայն, մայրաքաղաքից տարբերվող պայմաններում: Զմյուռնական իրադրության նկատմամբ մշտապես զգայուն Աթենքից ստացված մի հեռագիրը վկայակոչելով՝ «Մշակ» թերթը դեռևս ապրիլին ծանուցում էր, որ Զմյուռնիայում վերսկսվել են հայերի հալածանքները, կատարվել են ձերբակալություններ[27]: Տեղահանման առաջին քայլերը երիտթուրքերը սկսեցին Զմյուռնիայի շրջակայքի հայ ազգաբնակչությունից, ճիշտ այնպես, ինչպես Կ. Պոլսում՝ արվարձաններից: Գերմանական դեսպանության՝ 1915 թ. օգոստոսի 9-ի մի տեղեկագրում հայտնվում է, որ «Իզմիրի շրջանի հայկական գյուղերի բնակչությունը էվակուացվել է՝ որոշ հանգամանքներ հաշվի առնելով»[28]: Պետք է մտաբերել, որ Զմյուռնիայի շրջակայքից աքսորը տեղի է ունեցել 1915 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, իսկ թե որ բնակավայրերից և քանի մարդ՝ տեղեկագրում չի նշվում: Մի

---

[25] *Գերմանիան և Հայաստանը, էջ 254, 353, 355–356:*

[26] *Ջ. Կիրակոսյան. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, էջ 251:*

[27] *«Մշակ», 28. IV. 1915:*

[28] *Գերմանիան և Հայաստանը, էջ 184:*

«Վիճակացույցի» ծանոթագրության մեջ նշված է, որ Իզմիրից և թեմերից հայ բնակիչները տեղահանվել են 1915 թ. օգոստոսին և 1916 թ. փետրվարին[29]*:*

1915 թ. Զմյուռնիայից ու շրջակայքից տեղահանումների վերաբերյալ այլ տեղեկություններ չկան և զմյուռնահայերին ձեռք չտալու վիճակը շարունակվեց մինչև 1916 թ. հունիս: Այդ մի անդորր էր զմյուռնահայերի համար՝ Կ. Պոլսի հայության կացության համեմատ, որտեղ, ինչպես տեսանք, ձերբակալություններն ու տեղահանումները շարունակվում էին ամբողջ 1915 թ. ընթացքում՝ մինչև 1916 թ. մայիս: Զմյուռնիայում ստեղծված այս իրադրության վրա իրենց կնիքը դրեցին ոչ միայն Էնվերի, Թալեաթի, Խալիլի և մյուսների՝ մեզ հայտնի տարաձայնություններն ու վարանումները արտաքին ճնշումների առջև, այլև Զմյուռնիայի նահանգապետ Ռահմի բեյի հարաբերականորեն ինքնուրույն կեցվածքն ու գործելակերպը: 1915 թ. օգոստոսին Զմյուռնիայի ու շրջակայքի հայերի մասնակի տեղահանումներին նոր քայլեր չհետևեցին՝ հակառակ դրան դժկամորեն համաձայնած երիտթուրքական կենտրոնի ցանկությունների: Այս տեսակետից խնդիրը բավական լուսաբանվում է գերմանացի լրագրող ֆոն Տիչկայի՝ ռայխսկանցլեր Բ. Հոլվեգին 1915 թ. սեպտեմբերի 30-ին առաքած տեղեկագրում, որտեղ ասվում է. «Զմյուռնիայի և Ադրիանապոլսի վիլայեթներում հայերին թողնում են տեղում, ինչպես նաև մասամբ՝ Կ. Պոլսում… Զմյուռնիայի վալի Ռահմի բեյը և Ադրիանապոլսի վալի Հաջի Ադիլ բեյը հայտարարել են, որ չեն արտաքսի հայերին: Զեկուցման համար ներքին գործերի նախարարի (Թալեաթի – Ա. Խ.*) մոտ ժամանելով՝ երկուսն էլ պնդել են իրենց վճիռը: Կոմիտեում գոյություն ունեցող անհամաձայնության մի փաստ ևս: Թալեաթը ծայրահեղ է, ինչ նա ուզել է՝ մինչև հիմա կատարվել է: Ռահմին ավելի բանիմաց է, քան Թալեաթը և ավելի շատ է աշխարհ տեսել, գործնական է, սակայն նաև մարդասիրական բնավորություն ունի… Նա շատ համախոհներ ունի կոմիտեում»*[30]*:*

Իրականում Ռահմին միայն գերմանացի լրագրողի պաղ հայացքի տակ կարող էր «մարդասեր» թվալ՝ Թալեաթի ծայրահեղ մարդատեցության համեմատությամբ: Այդ երիտթուրքը ևս, ինչպես կտեսնենք, պատրաստ էր ոչնչացնել իր տնօրինությանը հանձնված վերջին հային, սակայն, այն տարբերությամբ, որ եթե Թալեաթի համար հայերի ոչնչացումը սևեռուն գաղափար էր, ապա Ռահմին այդ գաղափարը ծառայեցնում էր երիտթուրքական պաշտոնեության մեջ իր դիրքերի և, անտարակույս, իր բարեկեցության բնազդական գրգիռների բավարարմանը: Մյուս կողմից, և Ռահմին, և Հաջի Ադիլ բեյը, եթե սեփական խաղն էլ չէին սկսել երիտթուրքական վերնախավի միջավայրում, ապա առնվազն հանդես էին գալիս որպես այդ միջավայրում տարաձայնությունները ընդգծված դրսևորող գործոններ: Եվ այս ի-

---

[29] *Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Ա. Ալպոյաճյանի դիվան, -21*[12]*:*

[30] *Գերմանիան և Հայաստանը, էջ 294:*

մաստով հատկանշական է ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի՝ նրանց տված բնութագիրը: «1915 թ. մարտին,–գրում է նա,– երբ դաշնակիցների նավատորմը կասեցրեց գրոհը (Չանաքկալեի շրջանում – Ա. Խ.*) ողջ Օսմանյան կայսրությունը կործանման եզրին էր: Ամենուրեք հայտնվել էին նորելուկ հավակնոտ իշխանիկներ, ովքեր սպասում էին երկրի փլուզմանը, որպեսզի հափշտակեն ժառանգության իրենց բաժինը: Ջեմալը Սիրիայում փաստորեն արդեն հիմնել էր անկախ կառավարություն, Զմյուռնիայում Ռահմի բեյը՝ գեներալ-նահանգապետը, հաճախ արհամարհում էր մայրաքաղաքի իշխանություններին: Ադրիանուպոլսում Հաջի Ադիլը դավեր էր նյութում սեփական կառավարություն հիմնելու համար… Օսմանյան հպատակների շրջանում արագ տարածվում էր ըմբոստության ոգին»*[31]*:*

Որքան էլ Ռահմին արտաքուստ դժկամություն ցուցադրեր զմյուռնահայերի տեղահանության հարցում, այդուհանդերձ տեղի էր տալիս իր վերադաս կուսակիցներ Թալեաթի և Էնվերի պնդումներին՝ իրականացնելու տեղահանությունը: Վերջիններիս մտայնությունն էր հայտնում, ի դեպ, երիտթուրքական «Թասվիր-ի էֆքյար» («Կարծիքների արտացոլում») թերթը 1916 թ. հոկտեմբերին իր մի առաջնորդող հոդվածում, երբ «առաջ էր քաշում հայերի աքսորի պահանջը այն քաղաքներից և գավառներից, որտեղ նրանց մինչ այդ հանդուրժել էին»[32]*,– ինչպես նկատում էր Կ. Պոլսի գերմանական դեսպանատան հավատարմատար Ռադովիտցը:*

Զմյուռնահայերի առաջին աքսորը կատարվեց 1915 թ. հուլիս-օգոստոսին, այն բանից հետո, երբ Ռահմի բեյը պատվիրել էր իրեն անմռունչ ենթարկվող առաջնորդ Խ. Ինճեյանին՝ ստիպել ժողովրդին, որ ներկայացնի քաղաքում գտնվող «Դաշնակցութեան կոմիտէին պատկանող անհատներուն անուանացանկը՝ իրենց տան հասցէներով միասին»: Առաջնորդարանի դիվանատանը քվեատուփ էր դրվելու և մարդկանց առաջարկվել էր դրա մեջ գցել թղթերին գրված՝ կոմիտեի անդամների, ինչպես և «յեղափոխական գործերու մէջ գտնուած» այլ անձանց անունները: Հակառակ դեպքում Ռահմին սպառնում էր աքսորել բոլոր զմյուռնահայերին: Բնականաբար, վալիի համար դժվար չէր լինելու տուփը բազմաթիվ անուններով լցնելու գործը, որ ի սկզբանե արդեն վերագրվելու էր ժողովրդին: Հաջորդ օրը տուփի մեջ հայտնվում են 300-ի չափ անուններ, սկսվում են ձերբակալությունները, ապա տեղահանումները[33]*: Հավանաբար, այս 300 անձանց աքսորն է տեսել Ա. Գույումճյանը՝ նրանց անվանելով «Հայ կալանաւորներու առաջին կարաւան»: Դրան հաջորդում են այլ խմբաքանակներ ևս: «Ասոնց ընտանիքներու անդամներուն ալ*

---

[31] *Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը, Երևան, 2012, էջ 174:*

[32] Армянский вопрос и геноцид армян …, с. 408.

[33] *Ա. Գ ո ւ յ ո ւ մ ճ ե ա ն. Իզմիրի մօտաւոր անցեալէն խորհրդածութիւններ.– «Հայրենիք» (Բոստոն), 1956, 12–14 դեկտեմբերի:*

չինայուեցաւ հալածանքը: Նոյն իսկ ծեր այրեր ու կիներ կապանքի տակ կառնուէին եւ կաքսորուէին»[34],– գրում է այս հեղինակը:

Նույն «քվեատուփի» առթիվ Ռահմիի իրականացրած առաջին աքսորի մասին է խոսում նաև Լ. Երկանյանի վկայակոչած մի ականատեսը՝ զմյուռնացի տպարանատեր Խոսրով Մատիկյանը, ըստ որի, իրենց ընտանիքը «մաս կազմեց 200 հոգինոց առաջին կարավանին և մեկնեցաւ Իզմիրէն: Քուէատուփի զոհերէն էինք: Հասանք Աֆիոն Գարահիսար, ուր մնացինք: Ամիս մը չանցած՝ Իզմիր վերադարձանք հրամանի վրա, բացի 40-ի չափ կասկածելի նկատուածներէ, որոնց Գոնիա քշեցին»[35]:

Խ. Մատիկյանը այս աքսորը (քվեատուփի առիթով) վերագրում է 1916 թ. հունիսին, իսկ Ա. Գույումճյանն առհասարակ որևէ թվական չի նշում: Լ. Երկանյանը, որ առավել սթափ է ժամանակի վերարտադրության հարցում, գրում է, որ դեպքը տեղի է ունեցել 1915-ին՝ ինչ-որ «յաֆթա շանթաժի», ինչ-որ քվեատուփի առնչությամբ, որի մասին ինքը գրել է իր հուշերում[36]: Հետագա ուսումնասիրությունները, թերևս, լրացուցիչ լույս կսփռեն այս հարցի վրա՝ պարզելու «քվեատուփի» այս գործի ճիշտ ժամանակը և այլ հանգամանքներ[37]:

Կարծում ենք, 1915-ին են վերաբերում Զմյուռնիայի ամերիկյան հյուպատոսի անդրադարձները տեղի դաշնակցական գլխավոր անձանց դեմ երիտթուրքական կենտրոնի մոլուցքի և Ռահմի բեյի՝ այս առթիվ ցուցաբերած վարքագծի մասին: Ռահմին, հայտնում է նա, խիստ հանդիմանություն էր ստացել Թալեաթից՝ «իր գաւառին մէջ պէտք եղած հսկողութիւնը ցոյց տուած չըլլալուն»[38], այսինքն՝ տեղահանումների գործում եռանդ չցուցաբերելու համար: Դրանից հետո նա կազմակերպում է ընդհանուր «դավադրության գործը» և սպառնում ամբողջ հայ համայնքը հետիոտն աքսորել Անկարա, եթե իրեն չհայտնեն հեղափոխական 15 պարագլուխների անուններ: «Կերպով մը,– հայտնում է նախկին հյուպատոսը,– տասնեհինգ անուններ «գտաւ» և յայտարարեց, թէ պիտի կախի այդ անձերը»[39]:

Այդ առիթ է տալիս, որ 70 հայ ընտանիքներ գիշերը քնից հանվեն և աքսորվեն «Իբրն թէ Էնկիւրի»: Իր հերթին դեսպան Մորգենթաուն գրում է, որ Զմյուռնիայի ամերիկյան հյուպատոսը (Նորթոնը) իրեն տեղեկացրել էր, որ յոթ հայեր դատապարտվել են կախաղանի՝ 1909 թ. գործած ինչ-որ անորոշ հանցանքի համար: «Սա-

---

[34] *Նույն տեղում, 14 դեկտեմբերի:*

[35] *Լ. Ե ր կ ա ն ե ա ն. Յուշեր ու փուշեր.– «Յուսաբեր», 1957, 3 յունիսի:*

[36] *Նույն տեղում, 4 յունիսի:*

[37] *ՄՄ, Ա. Ալպոյաճյանի դիվան, -21[10]:*

[38] *Նույն տեղում:*

[39] *Դեսպան Հենրի Մորգենթաուի պատմությունը, էջ 262:*

կայն ոչ Ռահմի բեյը, ոչ էլ զինվորական հրամանատարը չէին հավատում այդ մեղադրանքներին»[40]:

Ռահմին, որ երկակի խաղ էր խաղում զմյուռնահայերի և Կ. Պոլսի կենտրոնի հետ, դիմում է վերջինիս՝ մահվան դատավճիռը իր կողմից չիրագործելը հիմնավորելով այն բանով, որ, ըստ օսմանյան օրենքների, դատապարտյալներն աղերսագիր գրելու իրավունք ունեն: Կենտրոնից եկած պատասխանը որևէ նոր բան չէր ավելացնում երիտթուրքերի ցինիզմին. «Տեխնիկապես դուք իրավացի եք. Նախ կախեք նրանց, հետո ուղարկեք ներման խնդրանքը»[41],– ասված էր այնտեղ: Ռահմին պատրաստ էր լվանալու իր ձեռքերը, սակայն, բարեբախտաբար, Մորգենթաուի միջամտության շնորհիվ բոլոր դատապարտյալներն ազատ արձակվեցին:

Ինչ վերաբերում է Ռահմիի գործողություններին և անգամ բացահայտորեն հակասական թվացող նրա վարքագծին, այդ ճանաչված իթթիհատական գործիչը և «դյոնմե»-ն, հիրավի, «մաքիավելիական» ճկունություն էր ցուցադրում պատերազմի տարիներին[42], երիտթուրքական առաջնորդների մշակած՝ մասնակի տեղահանություններով սկսելու և դրանք զանգվածայինով ավարտելու մեթոդը օգտագործելով Կ. Պոլսի իր գլխավորների հետ ունեցած հարաբերություններում՝ միշտ ելնելով սեփական շահերից ու չափազանց սրված ինքնապաշտպանական բնազդից: Երբ կենտրոնը Ռահմիից պահանջել էր Զմյուռնիայից աքսորել բոլոր լեվանտացիներին (թուրքաբնակ եվրոպացիներ), նա իր մոտ է հրավիրում անգլիացի Ջ. Հորթոնին և հայտնում. եթե ինքը հրաժարվի ի վերուստ եկած հրամանը կատարելուց, ապա պաշտոնանկ կարվի, իսկ եթե կատարի հրամանը, աքսորյալներն հազիվ թե ողջ մնան: Ապա պարզում է իր մտադրությունը՝ անել մի ինչ-որ բան, որ թվա, թե հրամանը կատարում է, այսինքն, կաքսորի միայն վատահամբավներին ու աղքատներին, իսկ մինչև հերթը հասնի մյուսներին, կարելի է հուսալ, որ փոփոխություններ կլինեն[43]: Նույն ոճը զգացնել է տալիս Ռահմիի՝ հայերի հետ ունեցած հարաբերություններում, համենայն դեպս, մասն ամբողջով փոխարինելու դեպքում[44]:

---

[40] G. M i l t o n. Paradise Lost, Smyrna 1922, London, 2008, p. 87.

[41] *Նույն տեղում, էջ 86–87:*

[42] *Նույն տեղում, էջ 15:*

[43] *Նույն տեղում, էջ 98–99:*

[44] *Թեոդիկը Ռահմիի այս գործելակերպը նկատի ունի, երբ բավականաչափ միանշանակ է բնութագրում նրան: «Իզմիրի կուսակալ Ռահմի,– գրում է նա,–կեղրոնէն բիտող ամէն հրահանգի հակառակ, պաշտպանած է այդ նահանգին հայոց մեծամասնութիւնը՝ կուսակցականներն ու անոնց ընտանիքները միայն մաքրելով քաղաքէն» (Թ է ո դ ի կ. Ամէնուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1916–1920, էջ 184): Թեոդիկը, անշուշտ, անգիտանում է նույն Ռահմիի գործողությունները 1916 թ. նոյեմբերին, երբ այս անգամ նա ձեռնարկել էր զմյուռնահայերի զանգվածային տեղահանումները և որը խափանեց 5-րդ բանակի զորահրամանատար, գերմանացի գեներալ Լ. ֆոն Սանդերսը: Ռահմին լիովին բացասաբար է ներկայացված ըստ մեկ*

1916 թ. հուլիսի 10-ի թվակիր մի փաստաթղթում, որ հրապարակել է Յո. Լեփսիուսը, ասվում է, որ տեղահանվել են Զմյուռնիայի շրջակայքի հայ առաքելականների հետ համեմատած՝ փոքրամասնություն կազմող բողոքական և կաթոլիկ հայերը[45]: Տխրահռչակ քվեատուփի առթիվ ևս, կամ դրանից առաջ, մի վկայության համաձայն, կենտրոնին գոհացում տալու նպատակով Ռահմին պահանջել էր Խ. Ինճեյանից և տեղաբնակ որոշ ջոջերից՝ տալ մի քանի տասնյակ ընտանիքների՝ աքսորելու համար[46], բնականաբար, հանդես գալով որպես զանգվածային տեղահանումները կանխող պաշտոնյա:

Շատ ավելի կտրուկ, բայց և դարձյալ իր երկդիմությունը պահպանելով՝ չքմեղանալու ուղեգիծ էր ընտրել Ռահմին, կազմակերպելով հույների զանգվածային աքսորը 1914 թվականին: Մոտ 4 հազար հույներ, գրում է Լ. Երկանյանը, Բերգամայի և շրջակայքի հույների դեմ պոռթկացող սպառնալիքի օրերին, փախան Հունաստան, և որ վալին էր այդ ողբերգության նենգմիտ հեղինակը. «Ոչ ջարդել, ոչ ալ աքսորել տուած էր: Յոյները իրենք իրենց մեկնէր էին (ահաբեկումներից հետո – Ա. Խ.)… Ռահմին որեւէ կերպով պատասխանատու չէ, եւ պրծաւ»[47]:

Պետք է կարծել, որ 1915 թ. օգոստոսից հետո և մինչև 1916 թ. մայիս, ինչպես Կ. Պոլսում, Զմյուռնիայում ոչ մեծ խմբերով կամ անհատապես շարունակվել են հայերի ձերբակալություններն ու աքսորը, որի մասին, ինչպես տեսանք վերը, վկայում էր պատրիարք Զավենը 1916 թ. մայիսին, հիշեցնենք՝ ամեն շաբաթ: Զմյուռնահայերի տեղահանությունների մեջ առավել նշանակալին և աղմկահարույցը եղավ 1916 թ. նոյեմբերի միջադեպը, որին խառնվեց Լ. ֆոն Սանդերսը: Աքսորի առիթը, ինչպես միշտ, հորինել էր Ռահմին, որի մասին հայտնում էր գերմանացի դիվանագետ Ռադովիտցը՝ նոյեմբերի 13-ի իր հեռագրում: Կաթոլիկական գերեզմանատանը, հայտնում է նա, հայտնաբերվել էին հին ռումբեր և զինամթերք, որոնք, «ասում են, այնտեղ էին թաքցրել հայերը»: Այդքանն էլ բավական էր, որ վալին պահանջի առաջնորդ Խ. Ինճեյանից և համայնքից, որ հայտնեն կասկածելի անձանց անունները և հանձնեն պահած զենքերը: Նոյեմբերի 2-ին կատարվեցին բազմաթիվ ձերբակալություններ, իսկ հաջորդ օրը 300 հայեր՝ ընտանիքներով, աքսորվեցին երկաթուղով: «Դրանց պետք է հետևեին աքսորյալների հերթական շարքերը»,– գրում է դիվանագետը: Կնշանակի, Ռահմին անցել էր ամբողջ համայնքի զանգվածային

այլ վկայության. «Ռահմի պէյ… չտեղահանեց Իզմիրի հայերը՝ փոխարեն մեծագումար կաշառքի մը: Տեղին հայ հարուստները յաջողած էին ոսկիով գնել անոր ազդեցութիւնը ի նպաստ իրենց» (տե՛ս Ա. Ա լ պ ո յ ա ճ ե ա ն. Յուշամատեան կուտինահայերու, Պէյրութ, 1961, էջ 228):

[45] Գերմանիան և Հայաստանը, էջ 327:

[46] ՄՄ, Ա. Ալպոյաճյանի դիվան, -21²:

[47] Լ. Ե ր կ ա ն ե ա ն. նշվ. աշխ.– «Յուսաբեր», 1957, 5 յունիսի:

տեղահանման գործողություններին: «Աքսորը ղեկավարում է Զմյուռնիայի ոստիկանապետը, որին վալին գործողության ազատություն է ընձեռել»[48],– հարում է Ռադովիտցը:

Յո. Լեփսիուսը հրատարակել է Լ. ֆոն Սանդերսի 1916 թ. նոյեմբերի 16-ի տեղեկագիրը կայզերական դեսպանությանը՝ այս դեպքերի վերաբերյալ: Նոյեմբերի 8-ին բազմաթիվ ձերբակալվածներ աքսորվեցին, իսկ նոյեմբերի 10-ի առավոտյան նա իր գլխավորած բանակի շտաբի պետ Քյազիմ բեյին ուղարկում է վալիի մոտ՝ իր անունից հայտնելու, որ նման զանգվածային ձերբակալություններն անհանդուրժելի են և քաղաքին վտանգ են սպառնում: Եվ եթե ոստիկանությունը շարունակի իր միջոցառումները, ապա ինքը ռազմական ուժով կարգելի դրանք: Գեներալը վալիին ժամանակ է տալիս մինչև նույն օրվա (նոյեմբերի 10-ի) կեսօր: Կեսօրից հետո Սանդերսի մոտ է գալիս Քյազիմ բեյը և հայտնում, որ վալին խոստացել է ձերբակալությունները և տեղահանումները դադարեցնել, որոնք այլևս չեն կրկնվի[49]: Հաջորդ օրը հանդիպում են Սանդերսը և Ռահմին: Վերջինս անհիմն է համարում Ռահմիի պատճառաբանությունները հայերի տեղահանումների հարցում և պահանջում է նրանց համար ապահովել անվտանգ պայմաններ[50]:

Ուշագրավ է, որ Ռահմին արդարանալու համար բացատրում է, որ Զմյուռնիայի երիտթուրքական կոմիտեն իրենից մշտապես դժգոհ է եղել հայերին խնայելու համար և որի պատճառով իր դիրքերը խախուտ են դարձել Կ. Պոլսում, որտեղից էլ գալիս է հայերի աքսորի պահանջը[51]: Ի վերջո, գեներալը Ռահմիից ստանում է գրավոր հավաստումներ, որ տեղահանումներին վերջ կտրվի և որ այն հայերը, ովքեր անմեղ են, հետ կդարձվեն աքսորից[52]: 1916 թ. նոյեմբերի 25-ի հեռագրով Գերմանիայի դեսպան Քյուլմանը հաղորդում էր, որ հայերի տեղահանումները Զմյուռնիայից դադարեցված են և որ գործը դրանով փակվել է[53]:

Անկախ գերմանացի գեներալի հայանպաստ գործողությունների քաղաքական նկատառումներից, մասնավորապես թուրքական դահիճներից սահմանազատվելու մտայնությունից, Զմյուռնիայի հայությունը աշխարհամարտի տարիներին տեղահանումներից փրկվեց նրա շնորհիվ: «Չըլլար Զանտէրս, կուսակալ Ռահմին՝ հայատեաց և հայահալած՝ անապատ պիտի դրկէր Իզմիրի ամբողջ հայութիւ-

---

[48] Армянский вопрос и геноцид армян…, с. 408.

[49] *Գերմանիան և Հայաստանը, էջ 345–346:*

[50] *Նույն տեղում, էջ 346:*

[51] Армянский вопрос и геноцид армян…, с. 408.

[52] *Յ ո. Լ ե փ ս ի ո ւ ս. նշվ. աշխ., էջ 347:*

[53] *Նույն տեղում:*

նը»[54],– իրավացիորեն գրում է Լ. Երկանյանը: Նույն եզրակացությանն է հանգել նաև Վ. Տատրյանը[55]:

Մաշտոցյան մատենադարանում պահվող մի վավերագրում՝ «Պատասխանիք պատրիարքարանի հարցարանին» վերնագրով, որ պատրիարքարանին է հղել Զմյուռնիայի հայոց առաջնորդարանը 1919 թ. դեկտեմբերի 3-ին, արձանագրված է, որ տեղի հայ բնակչությունը մասնակի տեղահանության է ենթարկվել 1915 թ. նոյեմբերի 15-ին և 1916 թ. հոկտեմբերի 25-ին. քիչ անց հայտնվում է նաև, դարձյալ մասնակի, 1915 թ. դեկտեմբերի աքսորի մասին[56]: Առնվազն տարօրինակ է, որ այստեղ լռության է մատնված 1916 թ. նոյեմբերի 8–9-աքսորի բավական աղմուկ հանած՝ Լ. ֆոն Սանդերսի միջամտության հետ կապված իրողությունը: Թերևս, պատճառն այն էր, որ առաջնորդարանը հարցարանին պատասխանել է զինադադարին հետևող խառնակ ամիսներին, երբ հաճախ փաստերին կարող էր փոխարինել միշտ պատրաստի, բայց ոչ այնքան ճշգրիտ հիշողությունը:

Պետք է կարծել, որ Զմյուռնիայի շրջակա բնակավայրերի հայությունը շատ ավելի ծանր հարվածների ենթարկվեց տեղահանությունների տարիներին, քան քաղաքի բնակչությունը: Մանավանդ ինքը՝ Ռահմին, հետևում էր մայրաքաղաքի երիտթուրքական պարագլուխների ուղեգծին՝ տեղահանությունները նախ սկսել արվարձաններից, մերձակայքից ու պանդուխտներից, հետո անցնել բուն քաղաքի հայ բնակչությանը: Վերոհիշյալ՝ առաջնորդարանի տվյալներով տեղահանվել են «Գուշատա՝ ամբողջովին, 1916 թ. փետրվարին, Տիքիլի՝ ամբողջովին, 1915 օգոստոս, Քրքաղաճ՝ 1915 թ. նոյեմբեր, մասնակի, Էոտեմիշ՝ մասնակի, 1916 նոյեմբեր, Պերկամայի շրջակայքը՝ Ֆրնուզ»[57]:

Վիճակագրությունից դուրս են մնացել, ինչպես տեսնում ենք, Զմյուռնիայի շրջակայքի բազմաթիվ այլ բնակավայրեր, որոնց մասին, ցավոք, ցայժմ տվյալներ չկան:

Մնում է անդրադառնալ այս ամենին հետևող հարցին՝ 1915–1916 թթ. քանի՞ մարդ ենթարկվեց մասնակի տեղահանումների: Դրան վերաբերող որոշակի տվյալները շատ կցկտուր են և առնվազն այդպիսին էլ կմնան, քանի դեռ փակ են թուրքական համապատասխան արխիվները և եթե որևէ բան պահպանված լինի դրանցում: Ուշագրավ են Յու. Հալաչօղլուի վերհանած՝ Թուրքիայի ռազմական պատմության և ռազմավարական հետազոտությունների վերահսկողության վարչության տվյալները (1914–1918 թթ.): Դրանց մեջ նշված է նաև Զմյուռնիայից աք-

---

[54] Լ. Ե ր կ ա ն ե ա ն. նշվ. աշխ., «Յուսաբեր», 1957, 4 յունիսի:

[55] В. Н. Д а д р я н. *Նշվ. աշխ., էջ 292:*

[56] ՄՄ, Ա. Ալպոյաճյանի դիվան, թղթ. 8, վավ. 21³, էջ 1–2:

[57] Նույն տեղում, էջ 1:

սորված հայերի թիվը՝ 256 մարդ[58]: Ինչ վերաբերում է այն հարցին, թե որտեղ են տարվել աքսորյալները, ապա Զմյուռնիայի առաջնորդարանի տվյալներով՝ Աֆիոն Կարահիսար, Կոնիա, Հալեպ և Դեր-Զոր:

Ե՛վ Կ. Պոլսի, և՛ Զմյուռնիայի հայերի՝ այս տարիներին կրած արհավիրքների պատմությունը բացահայտելիս առաջ է գալիս ևս մեկ հարց՝ զանգվածային տեղահանումներից նրանց զերծ մնալու պատճառների հարցը: Այդպիսիք են.

1. Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ, անկախ հայերի ցեղասպանության գործում այդ պետության մեղսակցության չափերից, 1916 թ. նկատելի դարձած՝ հայերին բնաջնջելու երիտթուրքական ծրագրից սահմանազատվելու ուղեգիծը: Այն դրսևորվեց ոչ միայն Օսմանյան Թուրքիայում գերմանական հյուպատոսների և դեսպանության զեկուցագրերում, այլև գերմանական բարձրաստիճան զինվորականության մեջ:

2. Ցեղասպանության դեմ միջազգային հանրության բողոքները, անգամ Օսմանյան Թուրքիայի ռազմավարական դաշնակիցների բացահայտ անբավականությունը:

3. Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ համայնքների ճանաչողական արժեքը Թուրքիայի սահմաններից դուրս, դրանց լինել-չլինելու հիմնահարցը մի հայտնի չափով վարանումներ էր մտցնելու երիտթուրքական կառավարողների վարքագծում:

4. Երիտթուրքական գործիչների մեջ իրենց իսկ կազմակերպած ցեղասպանության պատասխանատվությունից խուսափելու կամ դրանից ապահովագրվելու տրամադրությունները: Կ. Պոլսի հայերի վրա տեղահանումները տարածելու հարցը երիտթուրքական կենտրոնում 1915–1916 թթ. տեղիք է տվել սուր տարաձայնությունների, որով էլ բացատրվում է տարամիտող կողմերից մեկի կամ մյուսի տեսակետի գերակշռությունը և որի հետևանքով՝ մասնակի, ոչ ամբողջական տեղահանումների անկանոն պոռթկումները նշված տարիներին և ի վերջո՝ պոլսահայերի խնդիրը հետաձգելու, և ապա տեղահանումներից հրաժարվելու մտայնությանը համակերպվելը նշված կենտրոնի կողմից:

5. Զմյուռնահայ համայնքի պարագայում ևս 1915–1916 թթ. իրողություն դարձան մի քանի անգամ կիրառված տեղահանումները, սակայն, Կ. Պոլսի համեմատ՝ որոշակի տարբերություններով. այստեղ նշանակություն ունեցան ազդեցիկ նահանգապետ Ռահմիի անհատական որակները՝ ամբողջական տեղահանումների հարցում երիտթուրքական վերնախավին դիմակայելիս և հաջողելը՝ այդ հարցը սահմանափակել, գոնե մինչև 1916 թ. նոյեմբեր, մասնակի տեղահանումների շրջանակներում: Ընդսմին վերը նշված որակների մեջ չեն բացառվում նահանգապետի ամենևին էլ ոչ շահադիտական մղումները կամ կենտրոնի ոճրապարտ գործողութ-

[58] Y. H a l a ç o ğ l u. Sürgünden soykırıma Ermeni Idialeri. Istanbul, 2010, s. 64.

յուններից սահմանազատվելու միտումները: 1916 թ. նոյեմբերին, սակայն, Ռահմին տեղի է տվել երիտթուրքական պարագլուխների ճնշումներին և ձեռնարկել զմյուռնահայերի նոր՝ կա՛մ մասնակի, կա՛մ, որ առավել հավանական է թվում, ամբողջական տեղահանումները, որոնք խափանվեցին գերմանական բարձրագույն հրամանատարության դիրքորոշմամբ, ի դեմս 5-րդ զորաբանակի հրամանատար Լ. ֆոն Սանդերսի վճռական գործողությունների:

О ДЕПОРТАЦИИ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ КОНСТАНТИНОПОЛЯ И СМИРНЫ (1915–1916 ГГ.)

АЛЬБЕРТ ХАРАТЯН

Резюме

Депортация армян Константинополя и Смирны не имела массового характера и в основном была обусловлена внешнеполитическими причинами. Депортация константинопольских армян была предпринята младотурками 24 апреля 1915 г., когда в течение нескольких недель были заключены в тюрьмы тысячи армян – представители интеллигенции, партийные деятели, духовенство и т. д. В июле–августе и октябре–ноябре 1915 г. были депортированы тысячи людей, а после апрельских и майских депортаций, коснувшихся в основном неженатых армян-скитальцев, должна была последовать массовая депортация константинопольских армян, которая продолжалась до мая 1916 г.

Армяне Смирны и ее окрестностей были депортированы несколькими этапами: в июле–августе 1915 г., затем в феврале и июле 1916 г., когда из католических и протестантских общин армяне ссылались семьями. 8 ноября 1916 г. началась массовая депортация армян Смирны, были депортированы 300 чел. 9 ноября эти действия были пресечены немецким генералом Л. Фон Сандерсом, принудившим вали Рахми положить конец этим насильственным мерам. В ряду причин, содействовавших спасению армян Константинополя и Смирны от массовых депортаций, следует выделить ориентированность внешнеполитического курса Германии на неприятие геноцидальных действий Османской Турции, открытое недовольство стратегических союзников Турции, равно как и разноречивость мнений младотурецких правителей по вопросу изгнания константинопольских и смирнинских армян.

ABOUT THE DEPORTATION OF THE ARMENIANS OF CONSTANTINOPLE AND SMYRNA (1915–1916)

ALBERT KHARATYAN

Summary

During the Armenian Genocide the Young Turks started the deportation of the Armenians from Constantinople on April 24 1915, when thousands of thinkers, party leaders, priests and others were arrested in a few weeks. Then, in July–August and October–November 1915 followed the deportation and slaughter of thousands of Armenians. These genocidal actions against the Armenians of Constantinople continued until May 1916.

The Armenians of Smyrna and its surroundings were subjected to deportation several times: first in July–August 1915, and then in February and July 1916, when families from Catholic and Protestant communities were deported. On November 8 1916 the Turkish governor Rahman organized the Smyrnian Armenians' massive deportation, 300 people were deported, and they were followed by the next groups of deportees. On November 9 this genocidal process was prevented by the German General L. Von Sanders, who (by the threat of military intervention) forced Rahman to stop deportations. Among the causes of avoidance by the Armenians of Constantinople and Smyrna from the larger scale deportations should be mentioned a trend in the German foreign policy of dissociation from the Ottoman Empire's genocidal actions and the latter's strategic allies' dissatisfaction with those actions.